«Վրդանէս անպէտ հոգի. որ և ազդէ Սըանկեցի,
Ի գաւառէն Այրարատի և ի գեղջէն Գիլանեցի»։

1557ին հաստատուած է Սուչաւա իբր տեղւոյն եկեղեցիին քահանայ, անծանօթ պատճառով մը Վրթանէս կը գժտուի Գրիգոր Վարագեցիին հետ և ապա կը հաշտուի.

«Ահա հետ իմ եղբօրըն հաշտեցայ ես.
Բազում խռովելով ոխ պահեցի ես.
Գրիգոր Վարագեցի դու պարծալի ես.
Դու իմ աչացս լոյս և սիրելի ես»։

Վրթանէս մինչև 1660ի մօտերը Սուչավա կը գտնուէր. 1567ին ալ Կաֆա, իբր եպս. տեղւոյն և ականատես պարոն ղոյս նահատակի վկայութեան (1567 Յունուար 5 — Մայիս 15). յետ նահատակութեան կ'ամփոփէ անոր նշխարները եւ կը գրէ վկայաբանութիւնը (Հա. 1920. էջ 246-8)։

ԳՐԻԳՈՐ ԵՊՍ. ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ. — Մր. Նւ. 1793ին։

ԳՐԻԳՈՐ ԵՐԷՑ ՎԱՆԵՑԻ. — 1697ին Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ խորհրդատետր մը (ՄՁ. թ. 356) և կը գրէ հետևեալ յիշատակարանը. «Արդ գրեցաւ և ծաղկեցաւ սբ. տետրս, որ է խորհուրդ պատարագի ի սբ. քաղաքս Երուսաղէմ. ի դուռն սբ. Յակոբայ, ի թուականութեանս Հայոց ՌՃԽԶ (=1697) ձեռամբ բազմամեղ վանեցի Գրիգոր անարժան երիցու»։ Աստ անմիջապէս կը կցուի հետևեալը. «Դարձեալ յիշեցէք և Ած. ողորմի տացէք վանեցի ղազանչի տէր խաչատուրին ըռէիզ սբ. Ծննդեանըն, որ ետ փափագանօք գրել զսա և ոսկւով ծաղկել յիշատակ իւրն և ծնողացն և եղբարցն և ամ. մերձաւորացն և եդ ի խորանն սբ. ծննդեանն...»։ (Մայ ցուց. տետր Իէ. էջ 2042)։

ԳՐԻԳՈՐ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ. — Էջմ. ցուց. թ. 295 Տօնապատճառի մը երկու յիշատակարաններէն կը հասկցուի թէ՝ ան ընդօրինակուած է Լամբրոնացի Գէորգ պատանիէն 1267ին։ Սոյն ձեռագիրը Անանիա Շիրակացի վրդ. ի Յաղագս շրջագայութեան երկնից և Յաղագս երկնի, և Պաւղոսի Աղեքսանդրացւոյն նախերգան ի ներածութեան գրուածքներէն զատ՝ կը պարունակէ նաև Գրիգորի Երուսաղիմացւոյ ատենական գանգատ, ատենողական ըստ արբոց եւ ծայրագոյն վարդապետաց, յաղագս տարբերական եւ այլ եւ այլ անուանց